

Արձանագրություն N8

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի

18.03.2015թ. նիստի

Օրակարգ

1. 2014-2015 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցի հաստատում:
2. Առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի ու մագիստրատուրայի ուսումնական և աշխատանքային պլանների հաստատում:
3. 2014-2015 ուս. տարում ամբիոնների կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնների վարիչների հաշվետվությունները /Շ. Բաղդասարյան, Զ. Հարությունյան/:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 36 անդամներից 26-ը:

1. ԼՍԵՅԻՆ՝ Ֆակուլտետի դեկան Ս. Աբրահամյանը ներկայացրեց 2014-2015 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցը: Ընթացիկ քննությունները սկսվելու են մարտի քսաներեքին և ավարտվելու են ապրիլի երեքին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միաձայն քվեարկության արդյունքում հաստատվեց 2014-2015 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցը:

2. ԼՍԵՅԻՆ՝ Ֆակուլտետի դեկանը ներկայացրեց առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի ու մագիստրատուրայի ուսումնական և աշխատանքային պլանները: Դեկանը տեղեկացրեց, որ չորրորդ կուրսեցիների ուսանողների քանակի կրճատման պատճառով այս տարի մագիստրոսական խմբեր չեն լինելու մի շարք մասնագիտությունների գծով: Ուսումնական պլաններում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միաձայն քվեարկության արդյունքում հաստատվեցին առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի ու մագիստրատուրայի ուսումնական և աշխատանքային պլանները:

3. ԼՍԵՅԻՆ՝ Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Շ. Բաղդասարյանը իր հաշվետվության մեջ նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ կատարելագործվել է ուսումնատեխնիկական բազան, հաջողությամբ շարունակվել են մագիստրոսական ծրագրերը, հազեցվել է մասնագիտական գրականությունը, կազմակերպվել են մի շարք գիտական սեմինարներ, վիդեո կոնֆերանսներ արտերկրյա մասնագետների մասնակցությամբ, հրատարակվել են երեք դասագիրք, բազմաթիվ հոդվածներ, թեզիսներ, պաշտպանվել է մեկ թեկնածուական ատենախոսություն: Բակալավրիատի երեք ուսանող կրթաթոշակ են ստացել և մասնակցելու են Պերուջայի համալսարանի երեքամսյա դասընթացներին: Հոկտեմբերին ամբիոնը ակտիվորեն մասնակցել է արգենտինյան ֆիլմերի փառատոնին, շուտով մասնակցելու է իտալական ֆիլմերի փառատոնին: Դպրոցներում

դասախոսություններ են անցկացվել դպրոցականների մասնագիտական կողմնորոշման նպատակով: Մտահոգիչ է դիմորդների պակասությունը, ամբիոնը կարիք ունի պորտուգալերենի դասախոսի:

Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ Ջ. Հարությունյանը զեկուցեց, որ հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնն իրականացրել է հետևյալ աշխատանքները՝ ավարտին է հասցվել պրակտիկ դասընթացների ծրագրերի վերանայումը, արդյունքները չափազանց գոհացուցիչ են, պաշտպանվել են երկու ատենախոսություն, ընդլայնվել են միջազգային կապերը ֆրանկոֆոն երկրների հետ, անցկացվել ենք բաց դասեր արտերկրյա մասնագետների ընդգրկմամբ, ամբիոնի դասախոս Ս. Խաչատրյանը և երկու ուսանող ֆրանկոֆոնիայի քսանամյակին նվիրված գիտաժողովի են մասնակցել Բուխարեստում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ռոմանական և ֆրանսիական բանասիրության ամբիոնների հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատել բավարար:

4. ԸՆԹԱՅԻՆ Կ ՀԱՐՑԵՐ

Որոշոցին՝

- Երաշխավորել Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ Կ. Կարապետյանի թեկնածությունը պրոֆեսորի գիտական կոչում ստանալու վերաբերյալ:
- Երաշխավորել Անգլերենի թիվ 2 ամբիոնի ասիստենտ Ս. Կարապետյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչում ստանալու վերաբերյալ:
- Տպագրության երաշխավորել Ռոմանական բանասիրության ամբիոնի դասախոս Լիլիթ Սարոյանի *Ժամանակի ցուցանությունը իսպաներենում* մենագրությունը:
- Տպագրության երաշխավորել Անգլերենի թիվ 1 ամբիոնի դոցենտ Ս. Խասապետյանի ցեղասպանության հետ կապված տերմինների անգլերեն-հայերեն բառարանը:
- Հաստատել Արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ Ն. Գոնչար-Խանջյանի թեկնածությունը՝ գիտական ղեկավարություն իրականացնելու վերաբերյալ:
- Տպագրության երաշխավորել Առտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ Տ. Սիմյանի մենագրությունը:
- Տպագրության երաշխավորել Միջմշակութային հաղորդակցության ամբիոնի դոցենտ Ն. Հարությունյանի ուսումնական ձեռնարկը:
- Տպագրության երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ Ն. Սկրյանի ուսումնամեթոդական ձեռնարկը:
- Տպագրության երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ Ա. Մաթևոսյանի և ասիստենտ Լ. Գասպարյանի ուսումնական ձեռնարկը:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝

Գ. Մուրադյան

18 մարտի 2015 թ.